



## ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### ՈՐՈՇՈՒՄ

11 հունիսի 2021 թվականի թիվ 101-Ս

ք. Երևան

#### «ՖՐԻ ՆՅՈՒԶ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՍԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովն (այսուհետ՝ Հանձնաժողով) ուսումնասիրելով 2021 թվականի մայիսի 31-ին իր նախաձեռնությամբ հարուցված թիվ 32 վարչական վարույթի նյութերը՝ **պարզեց**.

Հանձնաժողովը «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքով (այսուհետ՝ Օրենք) վերապահված իր վերահսկողական գործառնություններն իրականացնելիս՝ հայտնաբերել է Օրենքի պահանջի խախտում, այն է՝ տեսալսողական մեդիաձառայություն մատուցող «ՖՐԻ ՆՅՈՒԶ» ՍՊ ընկերությունը (այսուհետ՝ նաև Հեռարձակող) չի իրականացրել իր կողմից հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման լիցենզավորման մրցույթին մասնակցելու հայտին կցված և լիցենզիայի պայման հանդիսացած պարտավորությունը:

Հանձնաժողովը ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետով՝ 2021 թվականի մայիսի 31-ին Հեռարձակողի նկատմամբ հարուցել է վարչական վարույթ:

Հանձնաժողովը հարուցված վարչական վարույթի մասին 2021 թվականի մայիսի 31-ին ծանուցել է Հեռարձակողին և հայտնել, որ վարչական վարույթի շրջանակներում այս հարցի վերաբերյալ կարող են ներկայացնել իրենց պարզաբանումները և բացատրությունները:

#### ***Հանձնաժողովի հիմնավորումները (պատճառաբանությունը) և եզրահանգումը.***

Այսպիսով, վարչական վարույթի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության, ձեռք բերված ապացույցների ուսումնասիրության և գնահատման արդյունքում Հանձնաժողովն ամրագրում է հետևյալը.

«Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 46-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով սահմանված է. «Հայտին կցվում են՝

1) փաստաթուղթ Հեռարձակողի նախանշված նպատակների իրագործման հիմնական ուղղությունների և միջոցառումների ընդհանրական նկարագրի վերաբերյալ, որը լիցենզիա ստանալու դեպքում կհանդիսանա **լիցենզիայի պայման**»:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը ստուգում է Հեռարձակողի կողմից սլոթի օգտագործման լիցենզավորման հայտին կցված **լիցենզիայի պայմանների** համապատասխանությունը:

Հանձնաժողովի 2021 թվականի հունվարի 15-ի թիվ 15-Ս որոշման համաձայն «ՖՐԻ ՆՅՈՒԶ» ՍՊ ընկերությունը ճանաչվել է հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման

լիցենզավորման մայրաքաղաքային սփռման մրցույթի հաղթող և վերջինիս տրամադրվել է Երևան քաղաքի տարածքում հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման լիցենզիա:

Հեռարձակողը հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման լիցենզավորման մրցույթին մասնակցելու համար ներկայացրել էր Հեռարձակողի («Մեր TV» տեսալսողական ծրագիր) նախանշված նպատակների իրագործման հիմնական ուղղությունների և միջոցառումների ընդհանրական նկարագրի վերաբերյալ փաստաթուղթ, որտեղ «Մեր TV» հեռուստաընկերության գործողությունների պլան» բաժնում ներկայացվել էր տեսալսողական ծրագրի թողարկման գործողությունների պլանը, մասնավորապես ներկայացվել էին հետևյալ տվյալները.

- 20 հունվարի մինչև 25 փետրվարի- ամբողջ տեխնիկայի տեղադրում,
- 15 հունվարի- պայմանական եթերացանցի թողարկում,
- 01 փետրվարի – եթերացանցի հիմնական հաղորդումների թողարկում:

Հեռարձակողի կողմից սլոթի օգտագործման լիցենզավորման հայտին կցված **լիցենզիայի պայմանների** համապատասխանության ստուգման լիազորությունն իրականացնելիս, Հանձնաժողովը 2021 թվականի ապրիլի 19-ի թիվ 01-335 գրությամբ «ՖԲԻ ՆՅՈՒԶ» ՍՊ ընկերությանն առաջարկել էր Հանձնաժողով ներկայացնել «Մեր TV» տեսալսողական ծրագրի կողմից տեխնիկական միջոցների տեղադրման, եթերացանցի թողարկման և եթերացանկում ներառված հաղորդումների թողարկման վերաբերյալ այն հիմնավոր տվյալները, որոնք կհավաստեին իրենց կողմից մրցութային հայտով ներկայացված նախանշված նպատակների իրագործման հիմնական ուղղությունների և միջոցառումների ընդհանրական նկարագրով ստանձնած պարտավորությունների իրականացման մասին:

Հանձնաժողով 2021 թվականի մայիսի 26-ին մուտքագրված դիմումով Հեռարձակողը հայտնել է, որ «Մեր TV» տեսալսողական ծրագրի կողմից գործողությունների պլանի ժամանակացույցի պատշաճ իրականացումը (մասնավորապես ամբողջ տեխնիկայի տեղադրումից մինչև եթերացանցի հիմնական հաղորդումների թողարկումը՝ 2021 թվականի հունվարի 20-ից մինչև 2021 թվականի փետրվարի 01-ը) անհնարին է դարձել՝ 2020 թվականի Արցախյան 44-օրյա պատերազմի, COVID-19 վարակի և դրանց հետևանքով առաջացած աշխատանքային բարդությունների հետևանքով և ներկայումս իրենց կողմից ձեռնարկվում են միջոցներ նոր ժամանակացույց սահմանելու և դրան պատշաճ կերպով հետևելու ուղղությամբ: Հեռարձակողը խնդրել է նաև նշված ժամանակացույցով նախատեսված գործողությունների իրականացման ժամկետ սահմանել մինչև 2021 թվականի հունիսի 01-ը:

Այսպիսով, վարչական վարույթի նյութերի ուսումնասիրության և համադրման արդյունքում Հանձնաժողովն ամրագրում է, որ Օրենքի և Հանձնաժողովի 2020 թվականի սեպտեմբերի 08-ի «Հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման լիցենզավորման մրցույթի անցկացման կարգը և լիցենզիայի ձևը հաստատելու մասին» թիվ 94-Ն որոշմամբ հաստատված կարգի համաձայն հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման լիցենզավորման մրցույթին մասնակցելու համար հայտատուների կողմից ներկայացվում է հայտ և անհրաժեշտ փաստաթղթեր:

Ըստ վերը նշված իրավական ակտերի հայտին կցվում են՝

1) փաստաթուղթ Հեռարձակողի նախանշված նպատակների իրագործման հիմնական ուղղությունների և միջոցառումների ընդհանրական նկարագրի վերաբերյալ, որոնք լիցենզիա ստանալու դեպքում կհանդիսանան լիցենզիայի պայմաններ.

2) ֆինանսական արդյունքները հիմնավորող փաստաթղթեր.

3) տվյալներ օգտագործվելիք տեխնիկական միջոցների վերաբերյալ.

4) տեղեկություններ աշխատակազմի քանակի, նրանց կրթության և մասնագիտության վերաբերյալ.

5) Էթիկայի կանոնագիրը, որը լիցենզիա ստանալու դեպքում կհանդիսանա լիցենզիայի պայման.

6) Էթիկայի կանոնագրի դրույթների ապահովման ինքնակարգավորման միջոցները, որոնք լիցենզիա ստանալու դեպքում կհանդիսանան լիցենզիայի պայման.

7) լիցենզավորման մրցույթին մասնակցելու համար «Պետական տուրքի մասին» օրենքով սահմանված պետական տուրքի վճարումը հավաստող անդորրագիրը:

Օրենքի 46-րդ հոդվածի 3-րդ մասի և Հանձնաժողովի 2020 թվականի սեպտեմբերի 08-ի «Հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման լիցենզավորման մրցույթի անցկացման կարգը և լիցենզիայի ձևը հաստատելու մասին» թիվ 94-Ն որոշմամբ հաստատված կարգի 18-րդ մասի համաձայն՝ հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման լիցենզավորման մրցույթի հայտատուի կողմից հայտին կցված հետևյալ փաստաթղթերը փաստաթուղթ իր նախանշված նպատակների իրագործման հիմնական ուղղությունների և միջոցառումների ընդհանրական նկարագրի վերաբերյալ, Էթիկայի կանոնագիրը և Էթիկայի կանոնագրի դրույթների ապահովման ինքնակարգավորման միջոցները, լիցենզիա ստանալու դեպքում հանդիսանում են լիցենզիայի պայման:

Հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել են ձեռք բերված և ներկայացված փաստերը, որի արդյունքում արձանագրում ենք Հեռարձակողի կողմից լիցենզիայի պայմանի խախտում:

Փաստում ենք, որ լիցենզիա ստացած Հեռարձակողը պարտավոր է պահպանել տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջները, իսկ օրենքի դրույթները խախտելու դեպքում կրել պատասխանատվություն օրենքով սահմանված կարգով, ուստի, օրենքի պահանջի չկատարումն ինքնին բերում է պատասխանատվության:

Հեռարձակողը պետք է հաշվի առնի, որ օրենքներով հստակ սահմանվում են իրավական նորմեր, որոնց չպահպանելը առաջացնում են իրավական հետևանքներ և Հեռարձակողը պատասխանատվություն է կրում տեսալսողական մեդիայի ոլորտը կարգավորող օրենսդրության կիրառման ապահովման համար և տվյալ դեպքում Հեռարձակողը պարտավոր էր կատարել Օրենքի 46-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի սահմանված դրույթի պահանջը:

Հեռարձակողի կողմից ներկայացված բացատրությունները բավարար չեն Հեռարձակողի նկատմամբ օրենքով սահմանված կարգով պատասխանատվություն չկիրառելու համար:

Այսպիսով, Հեռարձակողի կողմից իրականացվել է իրավախախտում, որը համապատասխանում է Օրենքի 57-րդ հոդվածի 29-րդ մասի հատկանիշներին:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի համաձայն՝ կարգավորող պետական մարմինը՝ Օրենքի խախտման կամ իր որոշումները չկատարելու դեպքում կիրառում է պատասխանատվության միջոցներ:

Օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կարգավորող պետական մարմնի կողմից տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտման դեպքեր հայտնաբերվելու, ինչպես նաև պետական այլ մարմինների կողմից իրենց իրավասությունների շրջանակում տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտման դեպքեր հայտնաբերվելու և դրանց մասին կարգավորող պետական մարմնին գրավոր տեղեկացվելու դեպքում կարգավորող պետական մարմինը կիրառում է հետևյալ վարչական տույժերը.

1) գրավոր նախազգուշացում.

2) տուգանք.

3) հեղինակագործման կամ լիցենզիայի գործողության կասեցում.

4) հեղինակագործման կամ լիցենզիայի գործողության դադարեցում:

Օրենքի 57-րդ հոդվածի 29-րդ մասը սահմանում է.

«Հեռարձակողի նախանշած նպատակների իրագործման հիմնական ուղղությունների և միջոցառումների ընդհանրական նկարագրին համապատասխան չգործելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով»:

Ելնելով վերոգրյալից, ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 46-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 32-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ և 25-րդ կետով, 55-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 57-րդ հոդվածի 29-րդ մասը՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը **որոշեց.**

1. «ՖՐԻ ՆՅՈՒԶ» ՍՊ ընկերության նկատմամբ կիրառել Օրենքի 57-րդ հոդվածի 29-րդ մասով սահմանված տույժը՝ տուգանելով սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն «ՖՐԻ ՆՅՈՒԶ» ՍՊ ընկերությանը պատշաճ ձևով հանձնելու օրվան հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

**ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**

**Տ. ՀԱՎՈՒՅԱՆ**

11 հունիսի 2021թ.

ք. Երևան